## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №58

«23» 09 2021 թ.

ք. Երևան

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2021 թվականի հոկտեմբերի 12-ից 15-ը Հայաստանի Հանրապետություն նախատեսվող այցի հետ կապված աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2021 թվականի հոկտեմբերի 12-ից 15-ը Հայաստանի Հանրապետություն նախատեսվող այցի հետ կապված աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով՝

***Աշխատանքային խմբի ղեկավար՝***

Գևորգ Բաղդասարյան — Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Աշխատանքային խմբի անդամներ՝***

Եղիազար Ավագյան — Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետ

| | |
|---|---|
| Համլետ Գրիգորյան | Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ |
| Հովհաննես Կարապետյան | Հայաստանի Հանրապետության դատախազության արարողակարգի վարչության պետ |
| Սարգիս Թարխանյան | Հայաստանի Հանրապետության դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության պետ |
| Հայկ Մարտիրոսյան | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Աիդա Շահբազյան | Հայաստանի Հանրապետության դատախազության արարողակարգի վարչության պետի տեղակալ: |

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ**
**ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝** **Հ.ԱՍԼԱՆՅԱՆ**